



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ**

ք. Զերմուկ

24/հուլիսի/2019 թ.

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6  
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...6... անդամներ:

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

համայնքի ղեկավարի խորհրդական Հայկ Դավթյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Արսեն Գառնիկյանը, ֆինանսական բաժնի պետ Արմինե Ղազարյանը, գլխավոր մասնագետ Ստեփանոս Վարդանյանը, առաջատար մասնագետ Մ. Առաքելյանը:

**Նիստը վարում էր Զերմուկ համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը**

**Նիստը արձանագրում էր Զերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը**

***Լսեցին***

**ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան

1. Հաստատել Զերմուկ համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 24-ի նիստի հետևյալ **օր ա կ ա ր Գ ը**.

1.1. Զերմուկ համայնքի ղեկավարի հաղորդումը 2019 թվականի երկրորդ եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.2. «Զերմուկ համայնքի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

